ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԹՈՒՆԵԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

RA MINISTRY of TERRITORIAL
ADMINISTRATION
STATE COMMITTEE of WATER SYSTEM
STATE AGENCY "PROGRAM
IMPLEMENTATION UNIT of REHABILITATION
of TUNNEL "ARPA-SEVAN"

0047. ք. Երևան, Ա. Արմենակյան 125
Հեռ. / ֆաքս՝ (37410) 65-11-16
էլ. հասցե՝ vorotan-arpa-sevan@rambler.ru

№ 01/297
<<02>> դեկտեմբերի 2014թ.

***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով***
***շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին***

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ <<Արփա-Սևան>> թունելի վերականգնման ԾԻԳ>> ՊՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է՝ <<ՀՀՏԿՆՋՏՊԿ-ԱՍԹՎԾԻԳ-15/1-ՇՀԱՊՁԲ-11/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով, ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 12-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի համձնաժողովի քարտուղարն է՝ ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ <<Արփա-Սևան>> թունելի վերականգնման ԾԻԳ>> ՊՀ-ի հաշվապահական հաշվառման և գնումների բաժնի գնումների մասնագետ Ն. Նիկոլայանը (հեռ. 010 65-11-16 ):

Հայտերը կբացվեն 2014թ. դեկտեմբերի 12-ին, ժամը 11:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ <<Արփա-Սևան>> թունելի վերականգնման ԾԻԳ ՊՀ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերումը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

***Միաժամանակ հայտնում ենք, ՀՀ կառավարության 10.02.2011թ N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի և էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով (գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ամբողջ քանակի համար առաջարկվող գնով) և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:***

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

ՏՆՕՐԵՆ՝ Ի. ՆԵՐՍԻՍՅԱՆ